ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«02» «08» 2018թ.**
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Արմեն Զոհրաբյան /ԳԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/,
Վալեր Հոդաբաշյան/ԲԱ/, Գուրգեն Մելքոնյան/ԲԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

1. Հայտերի գնահատման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ հրավերով նախատեսված (առաջարկվող) ապրանքի՝ տեխնիկական բնութագրերը և կոմիտեի կողմից մասնակիցների հարկային պարտավորությունների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ.

- 2-րդ չափաբաժնով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ <<Վանդեկոր>> ՍՊԸ-ն հրավերով և հայտով նախատեսված ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և ապրանքի տեխնիկական բնութագրերը ընդհանրապես չէր ներկայացրել:

Ուստի, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով որոշեց՝ մերժել <<Վանդեկոր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել այդ չափաբաժնով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 4-րդ մասի դրույթներով՝ 2-րդ չափաբաժնով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ին՝ առաջարկել ծանուցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հրավերով և հայտով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Մյուս չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների նեկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին և որպես ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունումը կհայտարարվի գնահատման արդյունքների հաստատման նիստի ավարտին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնահատող հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 212 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Ա. Զոհրաբյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան